ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿ ՆԱՑԻՍՏԱԿԱՆ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵԳԵՈՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

THE COVERAGE OF THE ARMENIAN LEGION'S HISTORY IN THE FASCIST GERMAN ARMED FORCES DURING THE WORLD WAR II BY THE ARMENIAN HISTORIOGRAPHY

ОСВЕЩЕНИЕ ИСТОРИИ АРМЯНСКОГО ЛЕГИОНА АРМЯНСКОЙ ИСТОРИОГРАФИЕЙ В ФАШИСТСКО-НЕМЕЦКИХ ВООРУЖЕННЫХ СИЛАХ ВО ВРЕМЯ ВТОРОЙ МИРОВОЙ ВОЙНЫ

Վոլոդյա Գասպարյան
Volodya Gasparyan
Володя Гаспарян

Երևանի պետական համալսարան, Հայաստան
Institute of Armenian Studies of Yerevan State University, Armenia
Ереванский государственный университет, Армения

vgasparyan@ysu.am

Ներկայացվել է՝ 03.07.2024; գրախոսվել է՝ 01.07.2025; ընդունվել է՝ 12.08.2025
Received: 03.07.2024; Revised: 01.07.2025; Accepted: 12.08.2025
Представлено: 03.07.2024; рецензировано: 01.07.2025; принято: 12.08.2025

© Հեղինակ, 2025: Տարածվում է Creative Commons Attribution 4.0 Licence-ի պայմաններով
© The Author, 2025. Distributed under the terms of Creative Commons Attribution 4.0 Licence
© Автор, 2025. Распространяется на условиях Creative Commons Attribution 4.0 Licence

DOI: 10.53548/0320-8117-2025.2-14

Ամփոփում – Հոդվածում վերլուծվում է Հայկական լեգեոնի ստեղծման, կազմավորման և գործունեության պատմությունը նացիստական Գերմանիայի զինված ուժերում Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին: Հիմնվելով արխիվային նյութերի, վավերական փաստաթղթերի, գիտական և հուշագրական աղբյուրների բազմակողմանի վերլուծության վրա՝ լուսաբանվում են լեգեոնի ստեղծման քաղաքական և ռազմավարական շարժառիթները, կազմավորման վայրերը և կազմի առանձնահատկությունները: Հեղինակը դիտարկում է, թե ինչպես է լեգեոնի զգալի մասը ձախողել Գերմանիայի նպատակները՝ անցնելով Կարմիր բանակի և եվրոպական պարտիզանական խմբավորումների կողմը: Հատուկ ուշադրություն է դարձվում հայ պատմաբանների գնահատականներին՝ ընդգծելով խորհրդային շրջանի և նորանկախ Հայաստանի պատմագիտական մոտեցումների միջև եղած տարբերությունները: Արդյունքները ցույց են տալիս, որ չնայած մասնակի ուսումնասիրություններին, լեգեոնի պատմությունը մինչև օրս չի ունեցել համապարփակ գիտական ուսումնասիրություն՝ հիմնավորված միասնական մոնոգրաֆիայի

ձևով: Հոդվածի գիտական նորությունը լեգեոնի գործունեության լայնածավալ վերլուծությունն է և նրա դերի նոր գնահատումը հայ ժողովրդի պատմական հիշողության համատեքստում:

Abstract – This article examines the history of the Armenian Legion's creation, structure, and activities within Nazi Germany's armed forces during World War II. Based on a comprehensive analysis of archival documents, authentic sources, and the works of prominent historians, the study reveals the political and military motivations behind the formation of the legion, as well as its organizational specifics and combat path. Special emphasis is placed on the fact that the majority of the legion's members did not serve Nazi objectives but defected to the Red Army and European resistance movements at the earliest opportunity. The article also explores the subsequent fate of the legionnaires in various European countries, including France, the Netherlands, Italy, and Greece. The coverage of the legion's history in Armenian historiography is presented through diverse perspectives, highlighting differences between Soviet-era and post-Soviet interpretations. Despite numerous partial studies, a comprehensive monograph encompassing the legion's complete history is still lacking. This work fills critical gaps in Armenian history and provides a new framework for reassessing the role of Armenian legionnaires within anti-fascist movements.

Аннотация – В статье рассматривается история создания, формирования и деятельности Армянского легиона в составе вооружённых сил нацистской Германии в годы Второй мировой войны. Основываясь на анализе архивных документов, подлинных источников и работ известных историков, автор раскрывает политические и военные мотивы формирования легиона, особенности его состава и боевой путь. Особое внимание уделяется тому факту, что большинство армянских легионеров не выполняли задачи вермахта, а при первой возможности переходили на сторону Красной армии и европейских движений сопротивления. В статье также анализируются судьбы легионеров в разных странах Европы – Франции, Нидерландах, Италии и Греции. Освещение истории легиона в армянской историографии представлено в многогранном аспекте с акцентацией различия между советским и постсоветским восприятием. Несмотря на ряд исследований, до сих пор отсутствует комплексная монография, всецело освещающая историю легиона. Данная работа, призванная восполнить пробелы в истории армянского народа, выдвигает новую точку зрения в вопросе оценки роли армянских легионеров в антифашистской борьбе.

Հիմնաբառեր – Հայկական լեգեոն, պատմագրություն, Կարմիր բանակ, դիմադրություն:
Keywords – Armenian Legion, historiography, Red Army, resistance.
Ключевые слова – Армянский легион, историография, Красная армия, сопротивление.

Ներածություն

Հայ ժողովուրդը գործուն մասնակցություն է ցուցաբերել Երկրորդ համաշխարհային պատերազմին: Ավելի քան 600 հազար հայ մարտնչել է տարբեր ռազմաճակատներում, որոնցից 200 հազարը զոհվել է: Հայերը պատերազմում մարտնչել են ֆաշիզմի դեմ ոչ միայն Կարմիր բանակի համազորային, այլև հայկական 6 դիվիզիաների (76-րդ, 89-րդ, 261-րդ, 390-րդ, 408-րդ և 409-րդ) կազմում: Մեծաքանակ հայորդիներ են եղել նաև Խորհրդային Միության դաշ-

նակից պետությունների (ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա և այլն) բանակներում, ինչպես նաև պարտիզանական և դիմադրության շարժման շարքերում:

Ուստի պատահական չէ, որ հայ պատմագրությունը մեծ ուշադրություն է դարձրել Երկրորդ աշխարհամարտին և Հայրենական մեծ պատերազմին հայերի մասնակցության լուսաբանմանը: Սակայն պատերազմին հայերը մասնակցել են նաև նացիստական Գերմանիայի զինված ուժերի կազմում գործող Հայկական լեգեոնի շարքերում, որ նույնպես լուսաբանվել է թե՛ խորհրդային և թե՛ հետխորհրդային հայ պատմագրության մեջ:

Ազգային ստորաբաժանումները Գերմանիայի զինված ուժերում

Մինչև այս հիմնահարցի լուսաբանումը հարկ է պատմական համառոտ անդրադարձ կատարել գերմանական զինված ուժերի կազմում գործող ազգային զորամասերի ու ստորաբաժանումների պատմությանը՝ հիմնահարցի վերաբերյալ հստակ պատկերացում կազմելու համար: Այսպես, պատերազմի տարիներին, սկսած 1942 թվականից, նացիստական Գերմանիայի զինված ուժերում քաղաքական, քարոզչական և ռազմական նպատակներով խորհրդային բանակի ռազմագերիներից կազմավորվեցին ազգային ռազմական ստորաբաժանումներ՝ լեգեոններ, ռուսական ազատագրական բանակ: Ըստ Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարության ռազմական պատմության ինստիտուտի և Ռուսաստանի պատմության, համաշխարհային պատմության և սլավոնագիտական ինստիտուտների հրատարակած «Великая Отечественная война 1941–1945» քառահատորյակի 4-րդ հատորի տվյալների՝ պատերազմի տարիներին նացիստական Գերմանիայի զինված ուժերի կազմում ստեղծվել են 26 թուրքեստանյան, 15 ադրբեջանական, 13 վրացական, 12 հայկական, 9 հյուսիսկովկասյան ազգությունների գումարտակներ: Դրանից բացի, Ղրիմի թաթարներից կազմավորվեց 8, իսկ Պովոլժիեի և Ուրալի թաթարներից՝ 7 գումարտակ, որոնցից յուրաքանչյուրը բաղկացած էր 900 մարդուց: 1942 թ. գերմանական "A" բանակային խմբում գործում էր հեծյալ կորպուս, որն իր շարքերում ուներ ավելի քան 5000 մարդ: Ավելի քան 300 000 զինվոր ուներ ռուսական ազատագրական բանակը, որի հրամանատարն էր ֆաշիստներին կամավոր գերի հանձնված գեներալ-լեյտենանտ Ա.Ա. Վլասովը, որը մինչ այդ եղել էր Կարմիր բանակի 2-րդ հարվածային բանակի հրամանատարը: Ֆաշիստական Գերմանիայի զինված ուժերում ստեղծվել էին նաև ուկրաինական, բելառուսական, էստոնական, լիտվական և լատվիական դիվիզիաներ (Великая Отечественная война 1941–1945 1999, 155–157):

Վերոնշյալ զորամասերից միայն ռուսական, ուկրաինական և մերձբալթյան միավորումները մարտնչեցին Խորհրդային բանակի դեմ՝ մինչև պատերազմի ավարտը, իսկ Մերձբալթիկայում և Ուկրաինայում այդ պայքարը շարունակվեց նաև պատերազմից հետո: Ինչ վերաբերում է գերմանական բանակի ազգային մյուս զորամասերին, ապա նրանց մեծ մասը առաջին իսկ մարտերում անցավ Կարմիր բանակի կողմը կամ համալրեց պարտիզանական ջոկատների շարքերը: Արևմտյան Եվրոպայի երկրներում գործող լեգեոնականների զգալի մասը, ֆաշիստական Գերմանիայի անվերապահ կործանումը զգալով, անցավ դիմա-

դրության շարժման կողմը և մարտնչեց ֆրանսիական, հոլանդական, իտալական, հունական հայրենասերների հետ:

Այժմ տեսնենք, թե հայ պատմագրության մեջ ինչպես է լուսաբանվել նացիստական Գերմանիայի զինված ուժերի կազմում գործող Հայկական լեգեոնի պատմությունը:

Հայկական լեգեոնը

Հայ պատմաբաններից առաջինն այս հարցին անդրադարձել է ակադեմիկոս Հրաչիկ Սիմոնյանը՝ «Սփյուռքահայությունը սոցիալ-քաղաքական պայքարի ուղիներում» իր աշխատության մեջ: Ըստ Հ. Սիմոնյանի՝ 1942 թ. աշնանը, Դրոյի գլխավորությամբ, հայ ռազմագերիներից կազմվեց 8 գումարտակ, որում ընդգրկված էր մոտ 8 հազար զինվոր (Սիմոնյան 1968, 447): 1942 թ. վերջերին ՀՅԴ-ի ջանքերով Բեռլինում կազմավորվեց նաև «Հայոց ազգային խորհուրդ», որի նախագահ նշանակվեց Արտաշես Աբեղյանը, փոխնախագահ՝ Աբրահամ Գյուլխանդանյանը, քարտուղար՝ Հարություն Բաղդասարյանը: 1943 թ. լույս տեսան Հայոց ազգային խորհրդի «Ազատ Հայաստան» (խմբագիր՝ Աբրահամ Գյուլխանդանյան, փոխխմբագիր՝ Գարեգին Նժդեհ) և Հայկական լեգեոնի «Հայաստան» շաբաթաթերթերը (խմբագիր՝ Գրիգոր Սահառունի): Խորհրդի մեջ էր նաև Գարեգին Նժդեհը: Հայկական լեգեոնի ղեկավարման համար գերմանական ռազմական գերագույն հրամանատարությանը կից ստեղծվեց հայկական խնամակալ մարմին՝ Ալֆրեդ Մուրադյանի գլխավորությամբ: «Հայ ռազմագերիների մեծ մասը ընդգրկվել էր լեգեոնի կազմում մի հիմնական նպատակամղումով՝ ռազմաճակատում հարմար պահի յուրայինների կողմն անցնելու համար», - նշում է Հրաչիկ Սիմոնյանը: Եվ նա իրավացի է: Երբ Կովկասի համար մղվող ճակատամարտի օրերին գերմանական զորքերը հասել էին Կովկասյան լեռնաշղթա, և մարտեր էին մղվում Անդրկովկաս ներխուժելու համար, և երբ 1942 թ. նոյեմբերի 19-ից Ստալինգրադում խորհրդային զորքի հակահարձակման հետևանքով շրջապատվեց ու ջախջախվեց գերմանական 300-հազարանոց զորախումբը, և սկսվեց ֆաշիստական բանակի համատարած նահանջը՝ ինչպես Ստալինգրադից, այնպես էլ Կովկասից, Կովկասյան ճակատում կռվող հայկական լեգեոնի մի գումարտակ համարյա ամբողջությամբ անցավ Կարմիր բանակի կողմը: Ապա Հրաչիկ Սիմոնյանը նշում է, որ «1943 թ. ամռանը հիտլերականները հայկական լեգեոնի մնացորդները տեղափոխում են Ֆրանսիա և օկուպացված եվրոպական ուրիշ երկրներ: Բայց լեգեոնականներից շատերը խույս տվեցին հիտլերականներին ծառայելուց և անցան պարտիզանական պայքարի հերոսական ճանապարհը՝ հիանալի շատ էջեր գրելով Ֆրանսիայի, Չեխոսլովակիայի, Հարավսլավիայի, Հոլանդիայի դիմադրական շարժման պատմության մեջ» (Սիմոնյան 1968, 437): Լեգեոնականների այն մասը, որ չցանկացավ հայրենիք վերադառնալ, պատերազմից հետո հանձնվեց ամերիկյան զորքերին, ապա բնակություն հաստատեց ԱՄՆ-ում և Կանադայում (Սիմոնյան 1968, 427):

Գերմանական բանակի հայկական լեգեոնի հիմնահարցը լուսաբանել է նաև պատմական գիտությունների թեկնածու Երվանդ Խալեյանը: «Հայ ժողովրդի

պատմության» 8-հատորյակի վերջին հատորի 4-րդ գլխի 2-րդ ենթաբաժնում նա համառոտակի անդրադարձել է լեգեոնի պատմությանը: Ըստ Ե. Խալեյանի՝ «1942 թվականի ամռանից դաշնակցական գործիչները Բեռլինի հրամանով լծվում են գերմանական հրամանատարության մտահղացած «հայկական լեգեոնի» կազմակերպման աշխատանքներին: Այդ գործի գլուխ են կանգնում Դրոն, Վահրամ Փափազյանը, Դավիթ Դավիթխանյանը, Սահակ Տեր-Թովմասյանը, Գարեգին Նժդեհը և ուրիշները: Նրանք, ճամբարից ճամբար անցնելով, հայ ռազմագերիներին լրտեսում, համոզում, խաբում, ահաբեկելով հարկադրում էին մտնել «հայկական լեգեոնի» շարքերը: Լեգեոնի շարքերում նրանք կատաղի հակախորհրդային քարոզչություն էին մղում՝ աշխատելով ամեն կերպ գաղափարական վերամշակման ենթարկել նրանց ու օգտագործել Կարմիր բանակի և պարտիզանների դեմ մղվող կռիվներում: Չնայած դաշնակցականների բոլոր ձեռնարկումներին՝ նրանց չհաջողվեց շոշափելի արդյունքների հասնել» (Հայ ժողովրդի պատմություն 1970, 152–153):

Խալեյանը լեգեոնի պատմությանն անդրադարձել է նաև «Հայ ժողովրդի զավակների մասնակցությունը Բելոռուսիայի համար մղված մարտերին (1941–1944 թթ.)» իր աշխատության մեջ. «Գերմանա-ֆաշիստական հրամանատարությունը սկսեց 1942 թ. լեգեոն կազմակերպել՝ նպատակ ունենալով խորհրդային ռազմագերիներին օգտագործել Գերմանիայի նվաճողական նպատակների համար: Լեգեոնները կազմակերպվեցին ըստ ազգային պատկանելության: Հայկական լեգեոնի գումարտակները կենտրոնացված էին Լեհաստանի Պուլավի և Ուկրաինայի Լոխվիցա քաղաքներում: Հարկադրանքով լեգեոն քշված հայ ռազմագերիները, կոմունիստների նախաձեռնությամբ, գումարտակներում և վաշտերում խիստ կոնսպիրացիայի կանոններով ստեղծեցին ընդհատակյա հակաֆաշիստական կազմակերպություններ: Նրանք իրենց առջև խնդիր էին դրել ամեն միջոցով մերկացնել ֆաշիստների ստահոդ պրոպագանդան, ռազմագերիների մեջ վառ պահել խորհրդային հայրենիքի սերը և նրանց նախապատրաստել ապստամբության, հարմար պահի կազմակերպված անցում կատարել Կարմիր բանակի կողմը և կամ միանալ պարտիզաններին, զենքը ուղղել ֆաշիստների դեմ:

Հիտլերը Կովկասյան ազգություններից լեգեոնների կազմակերպման առթիվ ասել է. «Այդ զուտ կովկասյան գումարտակների կազմակերպումը ես համարում եմ վերին աստիճանի վտանգավոր գործ... Չնայած Ռոզենբերգի և զինվորականների հավաստիացումներին՝ ես նույնպես չեմ հավատում հայերին» (Верт 1967, 418–419):

Հայկական լեգեոնում ապստամբություններ և պարտիզանների ու Կարմիր բանակի կողմն անցնելու գործողություններ կատարվեցին Ուկրաինայում և Հյուսիսային Կովկասի ռազմաճակատում: Հաջող անցումների հետ նաև տեղի ունեցան ձախողումներ, որոնց ընթացքում հարյուրավոր հայրենասերներ ձերբակալվեցին գեստապոյի կողմից, գնդակահարվեցին, կախաղան բարձրացվեցին և տանջամահ արվեցին տուգանային ճամբարներում:

Հայկական լեգեոնից գումարտակներ ուղարկվեցին նաև Ֆրանսիա, Հոլանդիա և Եվրոպայի այլ երկրներ: Ամեն տեղ նրանք իրենց կազմակերպութ-

յունների միջոցով կապեր հաստատեցին տեղի դիմադրական շարժման հետ, պայքար մղեցին ֆաշիստական զավթիչների դեմ...» (Խալեյան 1975, 85):

Ըստ Խալեյանի՝ հայ լեգեոնականները, փախչելով ռազմագերիների ճամբարներից, համալրեցին նաև Բելոռուսիայի պարտիզանների շարքերը: Նրանցից ավելի քան 60-ը դարձել են պարտիզանական բրիգադի և ջոկատի հրամանատարներ, շտաբի պետեր, կոմիսարներ, քաղղեկներ, վաշտի, դասակի, ջոկի հրամանատարներ և այլն: Բելոռուսիայում ընդհատակյա կազմակերպությունների մեջ և պարտիզանների շարքերում հայերի թիվը հասնում էր մոտ հազարի, որից ավելի քան 200-ը պարգևատրվել են շքանշաններով ու մեդալներով (Խալեյան 1975, 86):

Խալեյանը Հայկական լեգեոնի պատմությանը համառոտ անդրադարձել է նաև «Ղրիմի և Հյուսիսային Կովկասի պարտիզանական շարժման պատմությունից (1941–1944 թթ.)» և «Թշնամու թիկունքում» իր աշխատություններում (Խալեյան 1981, 192): Երկրորդ աշխատության մեջ Խալեյանը ուշագրավ փաստեր է բերում 1943 թ. փետրվարի վերջերին Լոխվիցայից (Պոլտավայի մարզ) Բրյանսկի մարզ բերված Հայկական լեգեոնի 3-րդ գումարտակի վերաբերյալ, որը տեղավորվեց Կլետնյա և Ակուլիչի բնակավայրերում: Մարտի 21–22-ին հայ լեգեոնականները Հակոբ Չոբանյանի գլխավորությամբ անցնում են պարտիզանների կողմը և միանում Ֆեոդոր Դանչենկովի պարտիզանական բրիգադին (Խալեյան 1990, 184–190):

Հայկական լեգեոնի կազմավորմանը և նրա ճակատագրին է անդրադարձել նաև պատմական գիտությունների դոկտոր, պրոֆ. Վիկտոր Մուրադյանը «Компартия Армении в годы Великой Отечественной войны» (1984, 266–286) գրքում: Հեղինակը արխիվային հարուստ փաստերի, համապատասխան գրականության և մամուլի հիման վրա, ժամանակի ոգուն համապատասխան, Հայկական լեգեոնի կազմավորման և գործունեության պատմությանը տվել է իր գնահատականը: Ըստ Մուրադյանի՝ Հայկական լեգեոնը կազմավորվել էր գերմանական հրամանատարության կողմից՝ ՀՅԴ ղեկավարների աջակցությամբ: Մուրադյանը հետաքրքիր տվյալներ է բերում ֆրանսիացի հրապարակախոս Ալեն Գերենի «Գորշ գեներալը» գրքից (Փարիզ, 1968 թ.), ըստ որի՝ կովկասյան ազգության պատկանող խորհրդային ռազմագերիներից 1942 թ. մայիս-օգոստոս ամիսներին Լեհաստանում կազմավորվեցին հայկական 10, ադրբեջանական՝ 10, վրացական՝ 11, Հյուսիսային Կովկասի ազգություններից՝ 5 գումարտակներ: Ուզբեկ, տաջիկ, ղազախ, թուրքմեն, կիրգիզ ռազմագերիներից ձևավորվեցին 20 հետևակային, 8 սակրային, 2 վարժական, 2 ոստիկանական վարժական գումարտակներ (Мурадян 1984, 267): Այդ գումարտակներից 4-ը թուրքեստանյան էին, մեկական՝ հայկական, վրացական և ադրբեջանական, 1942 թ. օգոստոսի վերջերին տեղափոխվեցին Հյուսիսային Կովկաս: Մուրադյանը արժանահավատ փաստեր է ներկայացնում Անդրկովկասյան ճակատի քաղվարչության 7-րդ բաժնի նյութերից, ըստ որոնց՝ լեգեոնականների 90%-ը հակված էր առաջին իսկ մարտերի ժամանակ անցնել Կարմիր բանակի կողմը:

Ըստ Մուրադյանի՝ Հայկական լեգեոնի գումարտակներից 6-ը կազմավորվել է լեհական Պուլավի, 4-ը՝ ուկրաինական Լոխվիցա քաղաքում: Յուրաքանչյուր գումարտակ բաղկացած էր 800 մարդուց: Այսինքն՝ Հայկական լեգեոնն իր շարքերում հաշվում էր շուրջ 8000 մարդ: Ըստ Դրաստամատ Կանայանի՝ Հայկական լեգեոնի անձնակազմը բաղկացած էր շուրջ 8–9 հազար մարդուց («Պայքար» 1948):

Ապա Մուրադյանը նշում է, որ 1942 թ. օգոստոսի 20-ին Հայկական լեգեոնի 808-րդ գումարտակը Պուլավիից ուղարկվել է Հյուսիսային Կովկաս և հոկտեմբերի 5-ին պաշտպանական դիրքեր գրավել Մայկոպի շրջանում: Հարմար առիթ գտնելով՝ գումարտակից շուրջ 100 մարդ, զենքը ձեռքներին, անցավ Կարմիր բանակի կողմը: Գերմանական հրամանատարությունը ստիպված եղավ գումարտակը հետ քաշել առաջին գծից և ուղարկել թիկունք (Մուրադյան 1984, 270–271):

Մուրադյանը օրինակ է բերում նաև Լոխվիցայում կազմավորված 3-րդ գումարտակի մասին, որն ուղարկվել էր կռվելու պարտիզանների դեմ: 850 հոգուց բաղկացած գումարտակից շուրջ 400 մարդ զենքը ձեռքներին անցան Բրյանսկի և ուկրաինական պարտիզանների կողմը, իսկ մնացած մասը գերմանական հրամանատարությունն ուղարկեց Ֆրանսիա:

Հայկական լեգեոնի 2-րդ գումարտակի մարզիկներից ոմանք, որ ուղարկվել էին Լենինգրադի շրջանում մարտնչող գերմանական զորքերին օգնության, նույնպես հարմար պահին անցան Լենինգրադի և Կալինինի մարզերում թշնամու թիկունքում պայքարող խորհրդային պարտիզանական ջոկատների կողմը և կռվեցին թշնամու դեմ:

Նման ճակատագիր ունեցավ նաև Ժիտոմիրի մարզ տեղափոխված Հայկական լեգեոնի 6-րդ գումարտակը, որը կրում էր 814-րդ համարը: 1943 թ. սեպտեմբերի 16-ին գումարտակի անձնակազմը՝ 256 մարդ, Արամայիս Հովսեփյանի գլխավորությամբ, զենքը ձեռքին անցավ գեներալ Նաումովի հրամանատարությամբ Ուկրաինայում կռվող խորհրդային պարտիզանների կողմը, և ստեղծվեց Անաստաս Միկոյանի անվան պարտիզանական ջոկատը՝ Արամայիս Հովսեփյանի հրամանատարությամբ: Շուտով գեներալ Կովպակի պարտիզանական միավորմանը միացան 814-րդ գումարտակի 80 հայ լեգեոնականները:

Մուրադյանը իր աշխատության մեջ հավաստի տվյալներ է բերում նաև Ֆրանսիա տեղափոխված հայ լեգեոնականների մասին, որոնց զգալի մասն անցավ ֆրանսիական դիմադրության շարժման կողմը և կազմավորվեց որպես առանձին զորամաս՝ ստանալով *Խորհրդային 1-ին պարտիզանական գունդ* անվանումը: Գնդի հրամանատարն էր Կարմիր բանակի գնդապետ Ալեքսանդր Ղազարյանը, շտաբի պետը՝ Դավիթ Մինասյանը, հրամանատարի տեղակալը՝ կապիտան Բարթուղ Պետրոսյանը: Գունդը իր շարքերում ուներ 2000 մարդ, որոնցից 1200-ը հայ էին:

Պրոֆեսոր Մուրադյանը, անդրադառնալով Հայկական լեգեոնի համառոտ պատմությանը, հանգում է այն եզրակացության, որ նացիստական Գերմանիայի զինված ուժերի շարքում կազմավորված Հայկական լեգեոնը ոչ միայն չծառայեց Վերմախտին, այլև դարձավ Կարմիր բանակի խորհրդային պարտիզանական

միավորումների, ինչպես նաև եվրոպական հակաֆաշիստական դիմադրության շարժման յուրահատուկ համալրման աղբյուր (Մուրադյան 1984, 284):

Գերմանական բանակի Հայկական լեգեոնի մասին խոսել է նաև պատմական գիտությունների դոկտոր Կլիմենտ Հարությունյանը: Առաջին անգամ նա այդ հարցին անդրադարձել է 1994 թ. «Գարուն» ամսագրի 7-րդ համարում՝ իր «Հայկական լեգեոնը» հոդվածում (68–70), ապա՝ «Հայ ժողովրդի մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին (1941–1945 թթ.)» (2002, 120–122), «Участие армянского народа в Великой Отечественной войне Советского Союза (1941–1945)» (2004, 717–720), «Вклад армянского народа в победу в Великой Отечественной войне (1941–1945) (2010, 484–486) աշխատություններում, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հրատարակած «Հայոց պատմությունը» բազմահատորյակի 4-րդ հատորի 1-ին գրքում (2010, 572–573) և Երևանի պետական համալսարանի Հայոց պատմության ամբիոնի կողմից 2012 թ. հրատարակված «Հայոց պատմություն» բուհերի համար նախատեսված դասագրքում (667–669): Լուսաբանելով Հայկական լեգեոնի համառոտ պատմությունը՝ հեղինակը հանգում է այն եզրակացության, թե «հայ լեգեոնականների բացարձակ մեծամասնությունը թշնամաբար էր տրամադրված նացիստների նկատմամբ և մտադիր չէր մարտնչելու նրանց համար: Հայ լեգեոնականների մեծ մասը գերմանական զինվորի համազգեստ էր հագել՝ մեղմելու ռազմագերու թշվառ վիճակը, իսկ հարկ եղած պահին անցնելու ռազմաճակատի գիծը, միանալու Կարմիր բանակին կամ պարտիզաններին: Ինչպես վկայում են փաստերը, ռազմաճակատ փոխադրված գումարտակների մեծամասնությունը կա՛մ միացավ պարտիզաններին (այդպես Ուկրաինայում կազմակերպվեց Անաստաս Միկոյանի անվան հայկական պարտիզանական ջոկատը), կա՛մ էլ անցավ ռազմաճակատի գիծը և շարունակեց մարտնչել Կարմիր բանակի շարքերում: Իսկ լեգեոնականների այն գումարտակները, որոնք տեղափոխվեցին Ֆրանսիա, դարձան խորհրդային պարտիզանական 1-ին գնդի հիմքը: Այսպիսին էր նաև Հոլանդիա, Հունաստան, Իտալիա տեղափոխված հայկական մյուս գումարտակների ճակատագիրը: Այսպիսով՝ հիտլերականների ստեղծած հայկական լեգեոնի ստորաբաժանումները ոչ միայն չծառայեցին ֆաշիստական Վերմախտին, այլև վերածվեցին խորհրդային պարտիզանների ֆրանսիական, հոլանդական, հունական Դիմադրության շարժումների համալրման աղբյուրների: Ուկրաինայի և Բելոռուսիայի պարտիզանական երկրամասերի ազատագրումից հետո և մինչև պատերազմի հաղթական ավարտը հարյուրավոր լեգեոնականներ կրկին մտան Կարմիր բանակի շարքերը, մարտնչեցին գերմանաֆաշիստական զավթիչների դեմ և իրենց ավանդը ներդրեցին ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի գործում» (Հայոց պատմություն 2010, 573):

Գերմանական բանակի Հայկական լեգեոնի մասին խոսել է նաև պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վլադիմիր Ղազախեցյանը՝ իր «Հայ պարտիզանները» գրքում: Աշխատության 7–10-րդ էջերում հեղինակը համառոտ ակնարկով անդրադառնում է Հայկական լեգեոնի կազմավորման պատմությանը, նշում, որ հայ պարտիզանների հիմնական զանգվածը կազմել են ռազմա-

գերիներն ու լեգեոնականները: «Ազգային զորամասերի (լեգեոնի) ստեղծումը մտահղացել էր գերմանական հրամանատարությանը, – գրել է Վ. Ղազախեցյանը: – Պատերազմի սկզբում գերության մեջ հայտնվեցին մեծ թվով կարմիր բանակայիններ ու սպաներ, խորհրդային ժողովուրդների զավակներ... Որոշ տվյալներով՝ ամբողջ պատերազմի ընթացքում խորհրդային բանակը ունեցել է 5750 հազար ռազմագերի, որոնց մեծ մասը (3800 հազարը) գերի է ընկել 1941 թ.: Շատերը մահացան սովից ու հիվանդություններից: Որոշ մասը տարբեր ձևերով հավաքագրվեց ազգային լեգեոնների անձնակազմերում: Ֆաշիստական Գերմանիան, ոտնահարելով միջազգային օրենքները, անտանելի պայմաններ էր ստեղծել նրանց համար: Մահվան դուռը հասած շատ մարդկանց համար կենդանի մնալու ելքը դարձավ լեգեոնը: Պատերազմի սկզբում հայ ռազմագերիների թիվը հասնում էր 10 հազարի, իսկ 1942–1943 թթ.՝ 20–30 հազարի: 30 հազար գերիների փաստը հաստատվում է նաև այլ տվյալներով» (Ղազախեցյան 2004, 7):

«Ռազմագերիներից ազգային զորամասեր կազմակերպելու մասին որոշում ընդունել էր գերմանական բանակի հրամանատարությունը՝ 1941 թ. դեկտեմբերի 30-ին, – նշել է Ղազախեցյանը: – Իսկ հայկական և այլ կովկասյան զինյալ ուժերի ստեղծման որոշումը կայացվել էր դրանից հետո: Արևելյան գրավյալ տարածքների մինիստրության 1942 թ. մարտի 28-ի «Կովկասյան զինվորական ստորաբաժանումների մասին հարցը» փաստաթղթում ասված էր, որ Ֆյրերի որոշումով նախատեսվում էր գերիներից ստեղծել կովկասյան զորամասեր, որոնք օգտագործվելու են Կովկասում մղվելիք կռիվներում: Այդ զինվորական ստորաբաժանումները կազմավորվում էին Անդրկովկասի ժողովուրդներից և ներկայացնելու էին 4 խումբ՝ հայկական, վրացական, ադրբեջանական և լեռնական (դաղստանցիներ): Ֆյրերն էր որոշելու, թե այդ զորամասերը, որոնց կարիքը կզգացվի, հատկապես «Կովկասը գրավելուց անմիջապես հետո, ինչ նպատակների համար պիտի օգտագործվեն»: Հայկական լեգեոնը կազմավորվեց տասը գումարտակով, 8–9 հազար անձնակազմով: Գումարտակների հրամանատարները գերմանացիներ էին, իսկ տեղակալները և կրտսեր հրամանատարները՝ հայեր: Լեգեոնի բազաներն էին Լեհաստանի Պուլավի և Ուկրաինայի Պոլտավայի մարզի Լոխվիցա քաղաքները: Լեգեոնի բազային կենտրոններում բարձրացված էր Հայաստանի Հանրապետության եռագույն դրոշը, իսկ լեգեոնականների համազգեստն ուներ «Armenia» տարբերանշանը» (Ղազախեցյան 2004, 9):

Ապա պրոֆեսոր Ղազախեցյանը համոզիչ փաստերով ներկայացնում է, որ ռազմաճակատ կամ պարտիզանների դեմ կռվելու համար ուղարկված հայ լեգեոնականների զգալի մասն անցել է Կարմիր բանակի կողմը կամ միացել պարտիզաններին: Նույն ճակատագրին են արժանացել Ֆրանսիա, Հոլանդիա, Հունաստան ուղարկված Հայկական լեգեոնի մյուս գումարտակները:

Գերմանական բանակի Հայկական լեգեոնի պատմության վերաբերյալ առանձին աշխատություններ է հրատարակել պատմական գիտությունների թեկնածու Էդուարդ Աբրահամյանը (Абрамян 2002; Абрамян 2005): «Վերմախտի հայկական լեգեոնը» գրքում հեղինակը մանրամասն տալիս է այդ զորամասի գումարտակների ստեղծման պատմությունը, նշում այդ ստորաբա-

ժանումների հաստիքային կառուցվածքը, սպառազինությունը, համարները՝ 808, 809, 810, 812, 813, 814, 815, 816, նաև նշում, որ Վերմախտի կազմում ձևավորված արևելյան լեգեոնների մեջ միայն հայկականն էր, որ ուներ միատարր ազգային կազմ: Ապա Աբրահամյանն անդրադառնում է Կովկասյան ռազմաճակատ ուղարկված 808-րդ և 809-րդ գումարտակների մարտական գործողություններին, նշում, որ Նալչիկ-Մոզդոկի ուղղությամբ գործող 808-րդ գումարտակը շուտով կազմացրվեց, քանի որ նրա անձնակազմի զգալի մասն անցել էր ռազմաճակատի գիծը և միացել Կարմիր բանակի զորամասերին: Տուապսեի շրջանում գործող 809-րդ գումարտակը, որն ստացել էր «Զեյթունցիներ» անվանումը, որպեսզի չունենա 808-ի ճակատագիրը, 1943 թ. հոկտեմբերին ուղարկվեց Հոլանդիա: Աբրահամյանը մի քանի թվական տվյալներ է բերում նաև գերմանական բանակի կողմից գերված խորհրդային զինվորների վերաբերյալ: Ըստ այդ տվյալների՝ գերիներից 70 հազարը պատկանում էր միջինասիական ազգություններին (ղազախներ, ուզբեկներ, թուրքմեններ և այլն), 30 հազարը՝ ադրբեջանցիներ, 20 հազարը՝ վրացիներ, շուրջ 25 հազարը՝ հայեր, շուրջ 30 հազարը Հյուսիսային Կովկասի լեռնականներ էին (Абрамян 2002, 3): Սակայն հեղինակը չի նշում այդ թվական տվյալների աղբյուրը: Մենք այդ տվյալները համեմատեցինք 2009 թ. Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարության գլխավոր շտաբի հեղինակային կոլեկտիվի հրատարակած «Великая Отечественная без грифа секретности. Книга потерь» հիմնակազմ տեղեկատու գրքում մեջբերված համապատասխան տվյալների հետ, տեսանք, որ հայ ռազմագերիների թիվը կազմել է 20067, ադրբեջանցիներինը՝ 20850, վրացիներինը՝ 23816 և այլն (Великая Отечественная без грифа секретности. Книга потерь 2009, 325): Ինչպես տեսնում ենք, Աբրահամյանի բերած տվյալները ռազմագերիների թվի մասին շատ քիչ է տարբերվում պաշտոնական տվյալներից: Աբրահամյանը իր մյուս՝ «Забытый легион» գրքում հիմնականում լուսաբանում է Կովկասի բնիկ ազգություններից կազմավորված «Բերգմանլեռնական» հատուկ միավորման պատմությունը, որ գրեթե չի առնչվում «Հայկական լեգեոնի» գործունեությանը, ուստի դրան չենք անդրադառնա:

Հայկական լեգեոնի և նրա անձնակազմի մի շարք մարտիկների պատմությանն է անդրադարձել նաև պատմական գիտությունների թեկնածու, ճանաչված լրագրող Միքայել Հակոբյանը: Առաջին անգամ նա այս հարցին անդրադարձել է դեռևս 1964 թ. ՀԽՍՀ ԳԱ հասարակական գիտությունների «Տեղեկագիր» հանդեսի 4-րդ համարում տպագրած «Մի անծանոթ էջ հայ ռազմագերիների ընդհատակյա պայքարից (Հայկական լեգեոնի առաջին (808-րդ) գումարտակը)» հոդվածում (31–47): Ինչպես նշել է հեղինակը, իր հոդվածը մի փորձ է վերականգնելու և ամբողջացնելու Հայկական լեգեոնի առաջին (գերմանական համարակալմամբ՝ 808-րդ) գումարտակի հերոսական պատմության էջերը, լույս սփռելու ծանրագույն պայմաններում այդ գումարտակի ընդհատակը գլխավորած հայրենասերների ճակատագրի վրա (Տեղեկագիր 1964, թիվ 4, 31): Իր առջև դրած խնդիրը Հակոբյանը լուծել է հաջողությամբ: Նա կարողացել է գումարտակի կենդանի մնացած մարդկանց հուշերի, համապատասխան գրականու-

թյան, մամուլի, ինչպես նաև որոշ արխիվային փաստերի հիման վրա շարադրել Հայկական լեգեոնի 1-ին գումարտակի կազմավորման պատմությունը: Ըստ Հակոբյանի՝ լեհական Պուլավի քաղաքում կազմավորված Հայկական լեգեոնի 1-ին (808-րդ) գումարտակի անձնակազմը հասնում էր 800 մարդու: Գումարտակը զինված էր 10 հաստոցային և 20 ձեռքի գնդացիրներով, 55 մմ տրամաչափի 6 և 82 մմ տրամաչափի 3 ականանետերով: 1942 թ. օգոստոսի 20-ին գումարտակը իր լրիվ կազմով երկաթուղային 2 գնացքակազմով դուրս եկավ Պուլավիից և սեպտեմբերի 29-ին հասավ Հյուսիսային Կովկաս՝ Մայկոպի շրջանի Նևթեգորսկ բնակավայր: Գումարտակի կազմում գործող ընդհատակյա հակաֆաշիստական կոմիտեն իր առջև խնդիր էր դրել առաջին գիծ հասնելուն պես գումարտակի ամբողջ կազմով անցնել Կարմիր բանակի կողմը: Սակայն դա չհաջողվեց, որովհետև մատնության հետևանքով գերմանացիները իմացան այդ մասին և գումարտակը հետ քաշեցին առաջին գծից և զինաթափեցին, իսկ նրա 33 գործուն ղեկավարներին ձերբակալեցին: Ըստ Միքայել Հակոբյանի՝ լեգեոնականներից միայն 73 հոգու էր հաջողվել անցնել Կարմիր բանակի կողմը: Վախենալով նման ճակատագրից՝ գերմանական հրամանատարությունը ստիպված էր գումարտակի մնացած մարտիկներին ուղարկել թիկունք և կազմացրել այն: Ֆաշիստական զինվորական դաշտային դատարանի վճռով գումարտակի առավել աչքի ընկած ընդհատակյա գործիչներ Ենոք Խաչատրյանը, Ժորա Գրիգորյանը, Արմո Ավետիսյանը, Գրիշա Հովհաննիսյանը, Սերգո Բարսեղյանը մահապատժի ենթարկվեցին կախաղանի միջոցով, շուրջ 400 լեգեոնական ուղարկվեց համակենտրոնացման ճամբար: Այսպիսի վախճան ունեցավ Հայկական լեգեոնի 1-ին (808-րդ) գումարտակը (Տեղեկագիր 1964, թիվ 4, 44–46):

Հակոբյանը լեգեոնականների ճակատագրին է անդրադարձել 1964 թ. Հայպետհրատի կողմից հրատարակված «Անհայտ կորած մարդիկ» գրքում: Նա, մասնավորապես, անդրադարձել է լեգեոնական Բագրատ Ոսկանյանի, Արամ Նալբանդյանի, Հակոբ Հակոբյանի, Ավետիս Կարապետյանի, Լևոն Տիտանյանի, Աշոտ Մաթևոսյանի, Բարթուղ Պետրոսյանի գործունեությանը, չափազանց ուշագրավ տվյալներ բերել նրանց մասին (Հակոբյան 1964, 245, 248, 287, 358, 382, 430, 438):

Գերմանական բանակի Հայկական լեգեոնի պատմության վերաբերյալ արժանահավատ տեղեկություններ կան 1975 թ. ՀԽՍՀ ԳԱ հրատարակության հրատարակած «Սովետական Հայաստանը Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941–1945)» փաստաթղթերի ու նյութերի ժողովածուում, որը կազմել են Հայաստանի կոմկուսի Կենտկոմի կուսակցության պատմության ինստիտուտի – ԽՄԿԿ Կենտկոմին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի, Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի և Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդին կից արխիվային վարչության աշխատակիցները: Մասնավորապես՝ լեգեոնի մասին կարևոր տեղեկություններ է պարունակում ժողովածուի 658–662-րդ էջերում տպագրված՝ 1943 թ. հունվարի 1-ի փաստաթուղթը, որ ստորագրված է Անդրկովկասյան ռազմաճակատի Սևծովյան զորախմբի շտաբի հետախուզության պետ, գնդա-

պետ Երյոմինի և զինկոմ Զումակի կողմից: Փաստաթուղթը կրում է «Անդրկովկասյան ռազմաճակատի Սևծովյան զորախմբի շտաբի հետախուզական բաժնի տեղեկատուից (գերմանական 17-րդ բանակի կազմում գործող ազգային զորամասերի ու լեգեոնի մասին)» վերնագիրը: Փաստաթղթում արժանահավատ տեղեկություններ կան ինչպես վրացական, թուրքեստանյան, Կովկասի լեռնականներից կազմավորված լեգեոնների, այնպես էլ Հայկական 1-ին (808-րդ) գումարտակի մասին: Փաստաթուղթը կարևոր սկզբնաղբյուր է Հայկական լեգեոնի պատմությամբ զբաղվողների համար: Այն պահվում է ԽՍՀՄ պաշտպանության նախարարության կենտրոնական արխիվում (ֆ. 40, ց. 9533, գ. 115, թ. 44–45):

«Հայկական լեգեոնի» և պարտիզանների ու Դիմադրության շարժման կողմն անցած հայերի մասին կարևոր տեղեկություններ են պարունակում նաև ժողովածուի 663–703-րդ էջերում տպագրված փաստաթղթերը:

Հայկական լեգեոնի մասին հետաքրքիր տեղեկություններ կան նաև լեգեոնական Հակոբ Զոբանյանի՝ «Մեր բրիգադի պարտիզպանները» (Թբիլիսի 1984), Լևոն Մկրտչյանի (Քարտաշյան)՝ 1995 թ. Երևանում հրատարակած «Պատերազմի տարիներին» աշխատություններում, որտեղ հեղինակները ականատեսների վկայությամբ լուսաբանում են լեգեոնի պատմության մի քանի էջեր:

Հայկական սփյուռքում ևս լույս են տեսել աշխատություններ, որտեղ փորձել են յուրովի մեկնաբանել Հայկական լեգեոնի պատմությունը: Այդ առումով ուշագրավ են Զավեն Մըսրլյանի՝ 1984 թ. Բեյրութում «Հայկազյան հայագիտական հանդեսի» 7-րդ համարում տպագրած «Համաշխարհային Բ պատերազմը և Հայկական լեգեոնը» հոդվածը (163–191) և Թեհրանի հայկական ուսանողական և երիտասարդական միության կողմից 1985 թ. պարսկերեն գրված և 1988 թ. Երևանում հայերեն թարգմանված ու հրատարակված «Դաշնակցության իսկական դեմքը» գրքույկը:

Այս հիմնահարցին նվիրված ծավալուն գիրք է Կիևում հրատարակել Ալեքսանդր Պանչենկոն: Հիմնահարցը մասամբ լուսաբանվել է նաև Սերգեյ Դրոբյազկոյի աշխատություններում:

Եզրակացություններ

Այսպիսով, հայ պատմաբանները թեպետ մինչ օրս այս կամ այն կերպ ներկայացրել են Հայկական լեգեոնի պատմությունը, սակայն դեռևս չկա հայերենով մի համահավաք գիրք, որտեղ լուսաբանված լինի լեգեոնի ամբողջական պատմությունը: Այս առումով էլ հայ պատմագրությունը դեռևս անելիք ունի: Դրանով ոչ միայն կլրացվեն հայոց պատմության սպիտակ էջերը, այլև նորովի և առարկայական կերպով գնահատանքի կարժանանա հայ լեգեոնականների գործունեությունը:

Շնորհակալական

Աշխատանքն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի աջակցությամբ՝ ԵՊՀ «Հայագիտական ուսումնասիրությունների ինստիտուտ» գիտահետազոտական նախագծի շրջանակում:

Գրականություն/References/Литература

1. Գարուն ամսագիր 1994, թիվ 7, 68–70:
   Garun Journal 1994, N 7, 68–70 (in Armenian).
2. Թեհրանի հայկական ուսանողական և երիտասարդական միություն 1985, Դաշնակցության իսկական դեմքը, Թեհրան (պարսկերեն), նույնը՝ 1988, Երևան (հայերեն թարգմանություն), «Հայաստան»:
   Armenian Student and Youth Union of Tehran 1985, The True Face of Dashnaktsutyun, Tehran (in Persian), the same: 1988, Yerevan, Hayastan (in Armenian).
3. Խալեյան Ե. 1975, Հայ ժողովրդի զավակների մասնակցությունը Բելոռուսիայի համար մղված մարտերին (1941–1944 թթ.), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
   Khaleyan Y. 1975, Participation of Armenians in the Battles for Belarus (1941–1944), Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Armenian).
4. Խալեյան Ե. 1981, Ղրիմի և Հյուսիսային Կովկասի պարտիզանական շարժման պատմությունից (1941–1944 թթ.), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
   Khaleyan Y. 1981, From the History of the Partisan Movement in Crimea and North Caucasus (1941–1944), Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press.
5. Խալեյան Ե. 1990, Թշնամու թիկունքում, Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ.:
   Khaleyan Y. 1990, Behind Enemy Lines, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Armenian).
6. Հակոբյան Մ. 1964, Անհայտ կորած մարդիկ, Երևան, Հայպետհրատ:
   Hakobyan M. 1964, Missing People, Yerevan, Haypethrat (in Armenian).
7. Հակոբյան Մ. 1964, Մի անծանոթ էջ հայ ռազմագերիների ընդհատակյա պայքարից (Հայկական լեգեոնի առաջին (808-րդ) գումարտակը), ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների տեղեկագիր, N 4, 31–47:
   Hakobyan M. 1964, An Unknown Page from the Underground Struggle of Armenian Prisoners of War (The First [808th] Battalion of the Armenian Legion), Bulletin of Social Sciences of the Armenian SSR Academy of Sciences, N 4, 31–47 (in Armenian).
8. Հայ ժողովրդի պատմություն 1970, հ. 8, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
   The History of the Armenian People 1970, vol. 8, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR (in Armenian).
9. Հայոց պատմություն 2010, հ. 4, գ. 1, Նորագույն ժամանակաշրջան (1918–1945 թթ.), Երևան, «Զանգակ-97»:
   The History of Armenia 2010, vol. 4, Book 1, Modern Period (1918–1945), Yerevan, Zangak-97 (in Armenian).
10. Հայոց պատմություն 2012, Երևան, ԵՊՀ հրատ.:
    The History of Armenia 2012, Yerevan, YSU Press (in Armenian).
11. Հարությունյան Կ. 2002, Հայ ժողովրդի մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին (1941–1945 թթ.), Երևան, «Զանգակ-97»:
    Harutyunyan K. 2002, Participation of the Armenian People in the Great Patriotic War (1941–1945), Yerevan, Zangak-97 (in Armenian).
12. Ղազախեցյան Վ. 2004, Հայ պարտիզանները, Երևան, «Զանգակ-97»:

Ghazakhetsyan V. 2004, Armenian Partisans, Yerevan, Zangak-97 (in Armenian).

13. Մըսրլյան Զ. 1984, Համաշխարհային Բ պատերազմը և Հայկական լեգեոնը, Հայկազյան հայագիտական հանդես, N 7, Բեյրութ, 163–191:
Msrlyan Z. 1984, World War II and the Armenian Legion, Haigazian Armenological Review, N 7, Beirut, 163–191 (in Armenian).

14. Սիմոնյան Հ. 1968, Սփյուռքահայությունը սոցիալ-քաղաքական պայքարի ուղիներում, Երևան, «Հայաստան»:
Simonyan H. 1968, The Armenian Diaspora in Socio-Political Struggles, Yerevan, Hayastan (in Armenian).

15. Պայքար 1948, Բոստոն, 13 հուլիսի:
Paykar 1948, Boston, July 13 (in Armenian).

16. Абрамян Э.А. 2002, Армянский легион вермахта (1941–1945 гг.), Ереван.
Abramyan E.A. 2002, The Armenian Legion of the Wehrmacht (1941–1945), Yerevan.

17. Абрамян Э.А. 2005, Забытый легион, Ереван, «Аполлон».
Abramyan E.A. 2005, The Forgotten Legion, Yerevan, Apollon (in Russian).

18. Арутюнян К. 2004, Участие армянского народа в Великой Отечественной войне Советского Союза (1941–1945), Ереван, «Гитутюн».
Arutyunyan K. 2004, Participation of the Armenian People in the Great Patriotic War of the Soviet Union (1941–1945), Yerevan, Gitutyun (in Russian).

19. Арутюнян К. 2010, Вклад армянского народа в победу в Великой Отечественной войне (1941–1945), Ереван, «Гитутюн».
Arutyunyan K. 2010, Contribution of the Armenian People to the Victory in the Great Patriotic War (1941–1945), Yerevan, Gitutyun (in Russian).

20. Верт А. 1967, Россия в войне 1941–1945, Москва.
Werth A. 1967, Russia at War 1941–1945, Moscow (in Russian).

21. Великая Отечественная война 1941–1945 1999, кн. 4, Народ и война, Москва, «Наука».
The Great Patriotic War 1941–1945 1999, vol. 4, The People and the War, Moscow, Nauka (in Russian).

22. Дробязко С. 1999, Вторая мировая война 1939–1945. Восточные легионы и казачьи части в вермахте, Москва, «АСТ».
Drobiazko S. 1999, World War II 1939–1945. Eastern Legions and Cossack Units in the Wehrmacht, Moscow, AST (in Russian).

23. Дробязко С. 2000, Русская освободительная армия, Москва, «АСТ».
Drobiazko S. 2000, Russian Liberation Army, Moscow, AST (in Russian).

24. Мурадян В. 1984, Компартия Армении в годы Великой Отечественной войны, Ереван, «Айастан».
Muradyan V. 1984, Communist Party of Armenia During the Great Patriotic War, Yerevan, Hayastan (in Russian).

25. Панченко А. 2013, Армянский легион, Киев, «Видавництво имени Олены Телиги».
Panchenko A. 2013, Armenian Legion, Kyiv, Olena Teligy Publishing House (in Russian).